



Առաջադրանք 5


Ձեր վարքագծի ուսումնասիրություն

Տևողությունը **15 րոպե**

Բոլոր պատասխանները պետք է գրանցել ***այս ձևաթղթի*** մեջ:

Ներածություն

Սիամական կռվան ձկնիկը *Betta splendens*-ը, քաղցրահամ ակվարիումային ձկների ամենատարածված տեսակներից է: Այն տարբեր կերպ է արձագանքում զանազան գրգոհչներից եկող ազդակներին:



Ձեզ ներկայացվում է սիամական կռվան ձկնիկի արու առանձնյակի հետ կատարված փորձի տեսագրությունը

Յաղո 1. (11 միավոր) Համակարգչի Էկրանի վրա գտեք «տեսանյութ» ֆայլը, մկնիկի ալաքը ուղղեք ֆայլի վրա և կրկնակի անգամ սեղմելով մկնիկի ձախ ստեղնը, սկսեք տեսաֆիլմի դիտումը:
Դիտարկեք ձկնիկի վարքը ակվարիումի մեջ հայելի ընկղմելուց առաջ և հետո: Տեսաֆիլմի դիտումը ավարտելուց հետո լրացրեք ստորև բերված աղյուսակը նշելով «+» այն վարքագծին համապատասխան վանդակում, որը չի դիտել եք և «-» այն վարքագծին համապատասխան վանդակում, որը չի դիտվել (Աղյուսակ 1)

Աղյուսակ 1

Համար	Վարքագիծ	Հայելի ընկրմելուց առաջ	Հայելի ընկրմելուց հետո
1.	Կրծքային լողակի խփոցը		
2.	Մարմնի և պոչային լողակի արագ և զիգզազաձև շարժումները		
3.	Մարմնի վրա հորիզոնական գոլերի երևալը		
4.	Ակվահումի հատակը կտցելը		
5.	Մարմնի գունավորման պայծառացումը		
6.	Մեջքային, անալ (հետանցքի) և պոչային լողակների հարթվելը, շտկվելը		
7.	Մարմնի վրա ուղղագիծ գոլերի ի հայտ գալը		
8.	Խօհիկային կափարիչի բացվելը		
9.	Մարմնի գույնի պայծառության նվազում		
10.	Կողային ցուցադրում*		
11.	Օդի որսում (օդը բավարար չէ)		

*Կողային ցուցադրումը ձկնիկի այն վարքագիծն է, որի ժամանակ ձկնիկը ցուցադրում է իր մարմինը կողքից՝ շտկելով մեջքային և պոչային լողակները ու դողացնելով մարմինը:

Հարց 2. (1 միավոր) Մինչև հայելու ընկրմելը և հայելու ընկրմելուց հետո ձկնիկի վարքագծում դիտարկված տարբերությունները կարելի է բացատրել.

- a.** այն տարածքի չափսի թվայցալ մեծացմամբ, որը ձկնիկը պետք է հիմա պաշտպանի,
- b.** նույն տեսակի անհատի նկատմամբ, որին ձկնիկը հիմա զգում է իր տարածքում, խնամքի վարքագիծ ցուցադրելու անհրաժեշտությամբ,
- c.** նույն տեսակի անհատի նկատմամբ, որին ձկնիկը հիմա զգում է իր տարածքում, դոմինանտություն հաստատելու անհրաժեշտությամբ ,
- d.** ձկնիկի վախի ռեակցիայով, որի պատճառը հայելու ի հայտ գալն է:

Ճիշտ պատասխանը՝ նշեք (Վ նշանով) ստորև բերված աղյուսակում:

a.	b.	c.	d.